Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«15»__դեկտեմբերի__2021 թ. թիվ 163 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____Ա. Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021Թ. ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ

/առ 06.12.2021/

Ներգնա և արտագնա շարժունություն

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

2021-2022 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում «Երկրաբանություն» մասնագիտությամբ առաջին կուրսի մեկ ուսանող ուսանելու է Ֆրանսիայի Լիլի համալսարանում:

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում «Երկրաբանություն» ամբիոնի երկրորդ կուրսի երկու ուսանող 3 ամսով իրենց մագիստրական թեզին նվիրված աշխատանքները իրականացրել են Գրեյսֆալդի համալսարանում, Գերմանիա:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ և ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Ս.թ. հունիսի 28-ից հուլիսի 4-ը ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնում դասախոսություններ է կարդացել Կրակովի գյուղատնտեսական համալսարանի դասախոս Գոհար Խաչատրյանը էրազմուս+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում: /1 ՊԴ կազմ/

Ս.թ. մայիսի 26-29-ին ՌԴ է գործուղվել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատվիրակությունը՝ ի դեմս կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանի, գիտական քարտուղար Մ.Սարգսյանի և տուրիզմի ոլորտի մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավար Զ. Հայրյանի, որտեղ համագործակցության հուշագիր կնքվեց Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի հետ: /3 ՎԿ/

Ս.թ. սեպտեմբերի 14-ից 16-ը Նեապոլի Ֆրիդրիխ II-ի անվան համալսարանի (Իտալիա) հասարակագիտության դեպարտամենտի պրոֆեսորներ Ռոսաննա դե Ռոսան և Ֆաբիո Կարբիսիերոն հանրային դասախոսություններով այցելեցին ԳԿՄԿ: /2 ՊԴ կազմ/

Ս.թ. հոկտեմբերի 14-ից նոյեմբերի 7-ը Բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի դասախոս Դավիթ Պիպոյանը «Սննդի անվտանգություն ու սնուցում» առարկա է դասավանդել Տուշայի համալսարանի Կենսաբանական գիտությունների դեպարտամենտում: /1 ՊԴ կազմ/

Ս.թ. հոկտեմբերի 14-ից 17-ը ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ պատմության, քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ Կարեն Խաչատրյանը մասնակցել է այստեղ տեղի ունեցած «Սահմանների ֆենոմենը պատմության և պատմական հիշողության մեջ» միջազգային կոնֆերանսին և հանդիպումներ ունեցել Հարավ-Կովկասյան դաշնային համալսարանի ղեկավարության հետ: Պայմանավորվածություն է ձեռքբերվել «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ համատեղ մագիստրոսական կրթական ծրագիր մշակելու՝ համատեղ դիպլոմի շնորհմամբ, մասին: /1 ՎԿ/

ԳԱՑ ցուցանիշ 6.1. Արտասահմանյան գործընկեր կազմակերպությունների թիվը

	2016	2017	2018	2019	2020*	2021
Պայմանագրերի թիվը	18	25	24	33	40	51
Գործուղումների թիվը ըստ գործընկերների	6	11	15	37	0*	5

ԳԱՑ ցուցանիշ 6.2 Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ

	2016	2017	2018	2019	2020	2021
Այցելություններ/ գործուղումներ արտասահմանից ԳԿՄԿ	9	12	6	13	0*	3

Ցուցանիշ 6.3 Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվը

	2016	2017	2018	2019	2020	2021
Արտասահմանում սովորող ԳԿՄԿ ուսանողների թիվ	8	2	14	8	0*	3**
ԳԿՄԿ-ում սովորող օտարերկրյա ուսանողների թիվ				2	0*	0
ՎԻՐՏՈՒԱԼ/ԱՌՑԱՆՑ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆ						
ԳԿՄԿ → Դոնի Ռոստովի հարավային դաշնային համալսարան						7
Դոնի Ռոստովի հարավային դաշնային համալսարան → ԳԿՄԿ						17
ԳԿՄԿ → Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոց						11
Նեապոլի Ֆեդերիկո 3-ի անվան համալսարան → ԳԿՄԿ						2

*Կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված՝ 2020թ. շարժունության բոլոր ծրագրերը կասեցվել են:

**Հայտարարված մրցույթների արդյունքում 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակում գործընկեր բուհերում կուսանեն ԳԿՄԿ 5 ուսանող և Էկոկենտրոնի 4 ասպիրանտ, մեկ մրցույթի արդյունքը դեռ չի ամփոփվել:

<u>Բաժնի կողմից մասնակցած միջոցառումներ</u>

- ս.թ. հունվարի 25-ին, 26-ին և փետրվարի 4-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Erasmus+ «Modernization of Doctoral Education in Science and Improvement of Teaching Methodologies» (MODEST) ծրագրի երեք առցանց վեբինարի:
- ս.թ. փետրվարի 2-ն բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԵՄ ERASMUS+ «Դոկտորական կրթության բարեփոխումը ՀՀ-ում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) ծրագրի առցանց վեբինարին՝ «Համագործակցային դոկտորական կրթություն. համալսարան-արդյունաբերություն գործընկերություն»
- ս.թ. փետրվարի 24-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԵՄ EURAXESS ցանցին և նոր HORIZON ծրագրին նվիրված առցանց տեղեկատվական սեմինարին:
- ս.թ. փետրվարի 24-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված «Higher Education Dialogues – Deep Dive» առանց հանդիպում-քննարկմանը:
- ս.թ. մարտի 4-6-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է ԵՄ ERASMUS+ «Դոկտորական կրթության բարեփոխումը ՀՀ-ում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) ծրագրի շրջանակներում եռօրյա աշխատաժողովի՝ «Developing National Policies and Regulations of Doctoral Education»
- ս.թ. ապրիլի 22-ին եվ 23-ին առցանց մասնակցել է «EURAXESS Group STUDY VISIT 2021»-ին՝ կազմակերպված գերմանական FAU համալսարանի կողմից:
- ս.թ. հունիսի 14, 15, 16, 18-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի կողմից Բրիտանական խորհդի Creative Spark նախաձեռնության ներքո իրականացվող SciNova ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ուսանողակենտրոն ուսուցման մեթոդներ» խորագրով վերապատրաստմանը:
- ս.թ. հուլիսի 27-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է 2020 EURAXESS-Armenia նախագծի շրջանակներում «EURAXESS Network: Career Development Opportunities for Researchers» առցանց սեմինարին:
- ս.թ. հոկտեմբերի 21-ին և 22-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է «The Use of Digitization and Collaboration for a Professional and Accessible Staff Support» առցանց վեապատրաստմանը:
- ս.թ. նոյեմբերի 24-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Եվրոպական միության «Հորիզոն Եվրոպա» ծրագրի և EURAXESS-Հայաստան պորտալի շնորհանդեսին:
- ս.թ. ապրիլի 8-ից 9-ը բաժնի գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը մասնակցել է Էրազմուս+ ազգային գրասենյակի կողմից կազմակերպված տեղեկատվական առցանց վեբինարներին՝ նվիրված Էրազմուս Մունդուս և Ժան Մոնե Գործողությունների դրամաշնորհային հնարավորություններին:
- ս.թ. հոկտեմբերի 21-ին բաժնի գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը մասնակցել է Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակի նախաձեռնած հիբրիդային աշխատանքային հանդիպմանը հայաստանյան 17 ԲՈՒՀ-երի միջազգային հարցերով զբաղվող գրասենյակների ներկայացուցիչների հետ:

● ս.թ. հոկտեմբերի 26-27-ը բաժնի գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը և առաջատար մասնագետ Աննա Սմբատյանը մասնակցել են Բարձրագույն կրթության ոլորտում Կարողությունների զարգացման (CBHE) ծրագրերի վիրտուալ տոնավաճառին, որը կազմակերպվել էր Եվրոպական, կրթության և մշակույթի գործադիր գործակալության կողմից:
● ս.թ. դեկտեմբերի 7-9-ը բաժնի գլխավոր մասնագետ Անժելա Պապիկյանը մասնակցել է եռօրյա առցանց աշխատաժողովին «Որակավորումների ազգային շրջանակի ներդնումը ՀՀ բարձրագույն կրթական համակարգում» խորագրով:
● ս.թ. դեկտեմբերի 16-ին բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը մասնակցել է Էրազմուս+ տեղեկատվական օրվան:

<u>Բաժնի կողմից կազմակերպած միջոցառումներ</u>

- ս.թ. մարտի 11-ին ԳԿՄԿ-ն հյուրընկալեց Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի (ԱՓՇԱՏԿ) տնօրեն Գայանե Հարությունյանին: Այցի նպատակն էր առավել մանրամասն ծանոթանալ կառույցների գործունեությանը, հաստատել համագործակցություն և քննարկել բարձրագույն կրթության ոլորտում առկա խնդիրները:
- ս.թ. մարտի 12-ին Արտաքին կապերի բաժնի նախաձեռնությամբ առցանց քննարկում տեղի ունեցավ ԳԿՄԿ իրավագիտության ամբիոնի և Տուշայի համալսարանի լեզվաբանության, գրականության, պատմության, փիլիսոփայության և իրավագիտության դեպարտամենտի ներկայացուցիչների հետ:

- ս.թ. մարտի 30-ին ԳԿՄԿ-ն հյուրընկալեց Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) ներկայացուցիչների քննարկելու «SciNova» կրթական ծրագրի իրականացումը ԳԿՄԿ-ում: Արդյունքում վերապատրաստումներին մասնակցել և հավաստագրեր ստացել են՝

  - «Ուսանողակենտրոն ուսուցման մեթոդներ»՝ 2 ՊԴ ներկայացուցիչ
  - «Հետազոտության մեթոդաբանություն»՝ 3 ՊԴ ներկայացուցիչ
  - «Գիտական նորարարությունների առևտրայնացում»՝ 4 ՊԴ ներկայացուցիչ

  Վերապատրաստման արդյունքում ԳԿՄԿ-ում ներդրվել է նոր հոսքային դասընթաց՝ «Գիտական հետազոտության մեթոդաբանություն և գիտական նորարարությունների առևտրայնացում»
- ս.թ. սեպտեմբերի 23-ին ԳԿՄԿ-ն հյուրընկալեց Լիլի համալսարանի (Ֆրանսիա, https://www.univ-lille.fr/home/) երկրագիտության դեպարտամենտի պրոֆեսոր Տանիել Դանիելյանին:
- ս.թ. դեկտեմբերի 17-ին անցկացվել է առցանց հանդիպում Նիտրայի գյուղատնտեսական համալսարնի հետ /Սլովակիա/՝ հնարավոր համագործակցության ուղիները քննարկելու նպատակով:
- ս.թ. դեկտեմբերի 24-ին ԳԿՄԿ-ն հյուրընկալեց Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) Ռազմավարական ծրագրերի գծով փոխտնօրեն Ս. Շամախյանին և ծրագրի համակարգող Ա. Այվազյանին:
- ԳԿՄԿ տնտեսագիտության ամբիոնի նախաձեռնությամբ՝ ամբիոնի հետ համատեղ կազմակերպել են առցանց քոլոքվիումներ՝ միջազգային բանախոսների ներգրավմամբ ԳԿՄԿ ուսանողների և դասախոսների, ինչպես նաև բոլոր հետաքրքրված անձանց համար:

- 23.02.2021՝ «Ի՞նչ է մշակույթը, և ո՞րն է նրա ազդեցությունը բիզնեսի վրա», բանախոսներ՝ Ջոն Բրենչ, Էմի Ջիլլեթ, Միչիգանի համալսարան, ԱՄՆ
- 16.03.2021՝ «Մտահղացումներ՝ ամսագրերում և գրքերում հրատարակվելու համար», բանախոս՝ Դեյվիդ Շուլց, Մինեսոտայի համալսարան, ԱՄՆ
- 08.04.2021՝ «Ռուսաստանի մագիստրատուրայի ստեղծումը. համառուսաստանյան հետազոտությունների արդյունքները» բանախոսներ՝ Գարմոնովա Աննա Վլադիմիրովնա, Օպֆեր Եվգենիա Անատոլևնա, Շչեգլովա Դարյա Վլադիմիրովնա, Ազգային հետազոտական համալսարանի տնտեսագիտության բարձրագույն դպրոց:

<u>Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագիր</u>

Կենտրոնը մասնակցում է ՝

➢ «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն)» կրթական ծրագրերի արդիականացում Հայաստանի և Վրաստանի համար» Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրին, որի շրջանակներում իրականացվում են «Բնապահպանություն և բնօգտագործում» ամբիոնի առարկայական նկարագրերի բարեփոխում/թարմացում, ձեռք է բերվել բարձրաէֆեկտիվ հեղուկային քրոմատագրային համակարգ, ջրի չափիչ սարք, MAXI44 ռոտորով միկրոալիքային քայքայման համակարգ միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիայի համար (ERLEP): Ծրագրի շրջանակներում ս.թ. սեպտեմբերի 6-ից 13-ը անցկացվեց «Շրջակա միջավայրի գիտությունները՝ հանուն կայուն առողջության» միջազգային առցանց ամառային դպրոցը, որի նպատակն էր Հայաստանում և Վրաստանում բնապահպանական կրթական ծրագրերի արդիականացման աշխատանքները լրացնել հետազոտահեն նորարարական ուսուցման ձևերով: Ամառային դպրոցին գրանցվել էին 103 մասնակից, ավարտել՝ 45 մասնակից: Ամառային դպրոցի բանախոսները 18ն էին՝ 4 երկրից:

➢ «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ARMDOCT) Էրազմուս+ կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում 2021թ. ձեռք են բերվել համակարգիչներ, տպիչներ և ստեղծվելիք դոկտորական դպրոցի համար անհրաժեշտ այլ տեխնիկա, ԳԱԱ ասպիրանտների ու գիտակայն ղեկավարների համար կահավորվել է առանձին լսարան, ծրագրի ԳԿՄԿ ներկայացուցիչները մասնակցել են վերապատրաստումների և աշխատաժողովների:

➢ 2019թ-ին ՀՀ ԳԱԱ-ն միացել է EURAXESS համաեվրոպական նախաձեռնությանը, որի շրջանակներում ստեղծվել է EURAXESS-Հայաստան պորտալը, որում ներգրավվել են Երևանի պետական համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը և ՀՀ ԳԱԱ Միջազգային գիտակրթական կենտրոնը: EURAXESS ցանցը գիտնականներին մատուցում է տեղեկատվական և օժանդակ ծառայություններ, աջակցում է գիտնականների տեղաշարժին և կարիերայի զարգացմանը՝ միաժամանակ հնարավորություն ստեղծելով ընդլայնել գիտական համագործակցությունը անդամ երկրների և աշխարհի միջև:

Կնքված նոր հուշագրեր և համաձայնագրեր

➢ ***Միջազգային հուշագրեր և համաձայնագրեր***

- ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի և Ստավրոպոլի Հյուսիսային Կովկասի դաշնային համալսարանի միջև կնքվել է եռակողմ

համաձայնագիր՝ «Անդրկովկասյան հետազոտությունների կենտրոն» միջազգային հետազոտական լաբորատորիա ստեղծելու մասին,

- Կնքվել է միջինստիտուցիոնալ համագործակցության համաձայնագիր Լիլի համալսարանի հետ /Ֆրանսիա/,
- Կնքվել է ակադեմիական և մշակութային համագործակցության մասին հուշագիր Հարավային դաշնային համալսարանի հետ /Ռուսաստան/,
- Վերակնքվել է համագործակցության համաձայնագիրը+ Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի հետ,
- Վերակնքվել է ցանցային համագործակցության համաձայնագիրը Ռուսաստանի ազգային հետազոտական համալսարանի բարձրագույն տնտեսագիտական դպրոցի հետ՝ առցանց դասընթացների միջոցով կրթական ծրագրերի իրականացման մասին,
- Կնքվել է ակադեմիական համագործակցության համաձայնագիր Տուշայի համալսարանի /Իտալիա/ հետ «Մարդու իրավունքներ և սոցիալական արդարություն» կրկնակի դիպլոմի մագիստրոսական ծրագիր իրականացնելու մասին,

➢ ***<u>Ներպետական հուշագրեր, պայմանագրեր և համաձայնագրեր</u>***

- Կնքվել է համագործակցության հուշագիր «ԱյԴԻ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության հետ
- Կնքվել է համագործակցության հուշագիր Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի եվ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի միջեվ ուսանողների վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման գործընթացն իրականացնելու մասին
- Կնքվել է համագործակցության հուշագիր Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (ԵՊՀ ԻՄ) հետ՝ միջբուհական համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման նպատակով
- Կնքվել է համագործակցության հուշագիր ԱԿԲԱ բանկ բաց բաժնետիրական ընկերության հետ
- Կնքվել է համաձայնագիր ՀՀ ՍԱՏՄ «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ
- ՀՀ ԳԱԱ գործընկեր գիտական կազմակերպությունների հետ կնքվել է համագործակցության համաձայնագրերի հավելվածներ:

<u>Մշակված փաստաթղթեր</u>՝

- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում անգլերեն լեզվով դասավանդվող դասընթացների ցանկ՝ https://www.isec.am/images/erasmus_plyus_pastatxter/ISEC_Course_Catalogue.pdf
- Միջազգային կրեդիտային շարժունության ուղեցույց ԳԿՄԿ ներգնա ուսանողների համար՝ https://www.isec.am/images/erasmus_plyus_pastatxter/ISEC_ICM_Handbook.pdf

➢ Մշակվել է ԳԿՄԿ պրոֆեսորադասախոսական եւ վարչական աշխատակազմի շարժունության հաշվետվության ձևաչափ

➢ Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի ասպիրանտ մասնակիցների հարցման ընթացակարգի նախագիծ

Հաշվետու տարում բաժինը՝

- պատրաստել, թարգմանել և ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ վեբկայքում է տեղադրել 37 նորություն և 24 հայտարարություն, որը կազմում է ԳԿՄԿ վեբկայքում տեղադրված նորությունների և հայտարարությունների առավել քան 45%-ը,
- աջակցություն է ցուցաբերել Էրասմուս+ ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ից Ֆրանսիա և Իտալիա մեկնող ուսանողների (մագիստրատուրա և ասպիրանտուրա) երկարատև վիզաների ձեռք բերման գործընթացին, /Ընդհանուր թիվը՝ 12/,
- տեղեկատվություն է տրամադրել տարբեր դեսպանատների մասին ԿՈՎԻԴ19-ի սահմանափակումների վերաբերյալ,
- խորհրդատվություն է տրամադրել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատակիցներին ԿՈՎԻԴ19-ի իրավիճակից ելնելով վիզաների ձեռքբերման գործընթացի մասին,
- հյուրընկալել է Իտալիայից ժամանած դասախոսներ, կազմակերպել նրանց դասախոսությունները առկա և առցանց տիրույթում, կատարել միաժամանակյա և տեքստային թարգմանություններ, հոգ տարել դասախոսների ազատ ժամանցի կազմակերպման մասին:

<u>Դասախոսական անձնակազմի օտար լեզվի վերապատրաստումների կազմակերպում 2021թ.</u>

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ի բարելավման պլանի շրջանակներում ս.թ. հունիս-օգոստոս ամիսներին ՀՀ ԳԱԱ օտար լեզուների ամբիոնը անցկացրեց պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ ՊԴ կազմ) օտար լեզվի /անգլերեն/ թեստավորում: Նախնական հայտի դիմորդների քանակն 77 էր, թեստավորվեց 77 դիմորդ, սերտիֆիկացվեց 20 դիմորդ: Արդյունքների հիման վրա ձևավորվեցին 5 տարբեր լեզվական մակարդակ ունեցող խմբեր՝ ցածր մակարդակ (6 դիմորդ, 5 սերտիֆիկացված), միջինից ցածր մակարդակ (10 դիմորդ, 6 սերտիֆիկացված) միջին մակարդակ (14 դիմորդ, 3 սերտիֆիկացված) միջինից բարձր մակարդակ (9 դիմորդ, 3 սերտիֆիկացված, բարձր մակարդակ (7 դիմորդ, 3 սերտիֆիկացված): Վերապատրաստմանը հատկացվեց 90 ժամ, որից 45-ը՝ լսարանային, 45-ը՝ ինքնուրույն (3 կրեդիտ):

Արդյունքում, հավաստագիր է ստացել թեստավորված դիմորդների մոտ 26%-ը: Ընդ որում, հետաքրքրական է, որ ցածր և միջինից ցածր մակարդակի խմբերում դիտարկվում է սերտիֆիկացման ավելի բարձր տոկոս՝ 83% և 60%, համապատասխանաբար, իսկ միջինից, միջինից բարձր և բարձր մակարդակներում առավել ցածր տոկոս է գրանցվել՝ 21.4%, 33% և 43% համապատասխանաբար:

Ռազմավարական նպատակ	Հիմնական գործողություն	Արդյունավետության հիմնական ցուցանիշ/KPI/	Վերջնարդյունք	2021թ արդյունքներ
Արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցության ընդլայնում, նոր կապերի ստեղծում և զարգացում, համատեղ նախագծերի, փորձի փոխանակման, կրթական ու գիտահետազոտական ծրագրերի նախաձեռնում	Ավելացնել արտասահմանյան առաջատար համալսարանների և գիտակրթական կենտրոնների հետ ԳԿՄԿ-ի համագործակցությունը	Կնքվող միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի թիվ	տարեկան **5** միջազգային համագործակցության համաձայնագրերի և փոխըմբռնման հուշագրերի կնքում	Կնքվել է **6** միջազգային համագործակցության համաձայնագիր, ինչպես նաև 5 արտաքին համագործակցության համաձայնագիր:
	Մշակել միջազգային համագործակցային ծրագրերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տարածման ճկուն և հանրամատչելի ուղիներ	Վեբկայքի առաջխաղացմանը խթանող լեզուների կիրառման թիվ Վեբկայքի այցելուների թիվ	Վեբկայքի այցելուների թվի աճ՝ տարեկան 1%	Եռալեզու վեբկայք 2020թ.՝ 50959 այցելու 2021թ.՝ 58523 Գրանցվել է այցելուների աճ 13.92%-ով
	Ամփոփել գործունեության արդյունքները յուրաքանչյուր տարվա ավարտին՝ ըստ ԳԿՄԿ միջազգայնացման ռազմավարության խնդիրների և մշակել համապատասխան միջոցառումների ծրագիր լավագույն փորձի տարածման և թերությունների շտկման նպատակով	Բաժնի հաշվետվություն	ԳԱՑ ցուցանիշներ	Տես՝ բաժնի հաշվետվություն

Արտասահմանյան հետազոտական համալսարանների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման գործընթացի շարունակականության ապահովում	Հավաքագրել և ԳԿՄԿ մասնագիտական ամբիոններին տարածել տեղեկատվություն գործող ծրագրերի, գիտական կոնֆերանսների, գիտական հոդվածների հրատարակումների հնարավորությունների վերաբերյալ,	Օտար լեզուներով հրապարակումների թիվ (տեղական և միջազգային ամսագրերում) Elsevier's Scopus database-ի կողմից ինդեքսավորված ակադեմիական ամսագրերում հրապարակված հոդվածների թիվ	տարեկան 1% աճ	Տվյալ պահին տեղեկատվությունը հասանելի չէ
	Բարելավել ասպիրանտների / պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունները միջազգային հրապարակումներ ունենալու համար	Վերապատրաստումների թիվ Օտար լեզուներով հրապարակումների թիվ	Վերապատրաստված դասախոսների թիվ	77 դասախոս մասնակցել է անգլերենի լեզվի դասընթացներին 9 դասախոս՝ «SciNova» ծրագրին
	Նախաձեռնել համատեղ հետազոտական նախագծեր տարբեր հետազոտական պատուհանների և հիմնադրամների միջոցով (Jean Monet, Horizon2020 և այլն)	Ընթացիկ համատեղ հետազոտական ծրագրերի թիվ	Հետազոտական ծրագրերի դիվերսիֆիկացում	Առկա չէ
Ուսանողական և պրոֆեսորադասախոսական համակազմերի փորձի, գիտելիքների, հմտությունների ու կարողությունների փորձի փոխանակման գործընթացի ընդլայնում	Ավելացնել ԳԿՄԿ միջազգային կրեդիտային շարժունակության ծրագրերի թիվը՝ դրանով իսկ նպաստելով ԳԿՄԿ ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի շարժունակությանը	Փորձի փոխանակման համար արտասահման ուղարկվող և արտասահմանից ժամանող ուսանողական, պրոֆեսորադասախոսական վարչական համակազմերի թիվ	տարեկան 3 միջազգային կրեդիտային շարժունակության ծրագիր	Կիրառելի չէ տվյալ տարվա համար, քանի որ 2020թ. Էրազմուս+ հայտերի մրցույթ չի հայտարարվել՝ համաճարակով պայմանավորված:

	Մշակել միջազգային կրեդիտային շարժունությանը վերաբերող համապատասխան փաստաթղթեր և ընթացակարգեր	Մշակված փաստաթղթերի թիվ		Մշակվել է 4 փաստաթուղթ /մանրամասները՝ բաժ նի հաշվետվություն /
	Կազմակերպել տեղեկատվական սեմինարներ	Կազմակերպված իրադարձությունների թիվ		Կազմակերպվել է երկու տեղեկատվական սեմինար
Կենտրոնի բոլոր մասնագիտացումներում դասավանդվող մասնագիտական դասընթացների օտարալեզու դասախոսությունների պրակտիկայի ընդլայնում	Ներդնել օտար լեզուներով դասավանդվող ծրագրեր և առանձին դասընթացներ՝ շեշտադրում կատարելով անգլերենի վրա	Օտար լեզուներով դասընթացներին մասնակցող ուսանողների թիվ, Օտար լեզուներով դասավանդվող դասընթացների թիվ Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ	Օտար լեզուներով դասընթացների տարեկան 1% աճ	Վիրտուալ շարժունության մասնակից ուսանողների թիվ՝ 37 2021-2022 ուս տարում օտար լեզվով դասավանդվող դասընթաց՝ 2 Կրկնակի/համատեղ կրթական ծրագրերի թիվ՝ 4 Միջազգային ամառային դպրոցի մասնակիցների թիվ՝ 45

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ արտաքին կապերի բաժին պետ՝ Ա. Հարությունյան